ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, 094 31 39 77 1nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2017թվականի N28-Ա

ԳԱԳԻԿԻ ԼԵՎՈՆԻ ՉԱՐՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով, ու հիմք ընդունելով Գագիկ Լևոնի Չարչյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի այգեզանգվածի թիվ 21/15 հասցեի հողամասում 1991 և 2005 թվականներին ինքնակամ կառուցված S=244,78 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Գագիկ Լևոնի Չարչյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի այգեզանգվածի թիվ 21/15 հասցեի հողամասում (գործառնական նշանակությունը – բնակելի կառուցապատման, նպատակայինը՝ բնակավայրերի) 1991 և 2005 թվականներին ինքնակամ կառուցված S=244,78 ք.մ. մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=230.6 ք.մ.մակերեսով այգետնակը և S=5.18 ք.մ.մակերեսով պարիսպն ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ապա նրանց օրինականացման համար վճար չգանձել իսկ S=9.0 ք.մ.մակերեսով սանհանգույցը կառուցվել է 2005 թվականին, ապա նրա օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 5940 /հինգ հազար ինը հարյուր քառասուն / դրամ:

3. Ճանաչել քաղաքացի Գագիկ Լևոնի Չարչյանի սեփականության իրավունքը վերջինիս պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի այգեզանգվածի թիվ 21/15 հասցեում գտնվող 500քմ մակերեսով մինչև 20% ավել օգտագործվող 22,5քմ հողամասի նկատմամբ՝ այն անհատույց տրամադրելով իրեն.

4. Գագիկ Լևոնի Չարչյանին պատկանող 0,05հա մակերեսով, 07-051-0136-0025 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Դարանի,, թաղամաս, 3-րդ փողոց, տուն 15:

5.Սույ նորոշումն ուժի մեջ է մտնում նշված գումարը վճարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

30 մայիսի 2017թ,
գ.Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, nurnus.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 02» հունիսի 2017 թվականի թիվ 29-Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԲԵՐՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետերի և հիմք ընդունելով ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու վերաբերյալ Հովհաննես Ալբերտի Հովհաննիսյանի հայտը՝ որոշում եմ.

1.Նուռնուս համայնքի վարչական տարածքում գտնվող, 07-051-0010-0033 կադաստրային ծածկագրով, գյուղատնտեսական նշանակության 0,543279 մակերեսով հողամասում մրգերի չորանոց կառուցելու նպատակով, նախագիծ պատվիրելու համար Հովհաննես Ալբերտի Հովհաննիսյանին տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:

2. Պարտավորեցնել Հովհաննես Հովհաննիսյանին.

1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման

2)կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2017թ. հունիսի 02
գ.Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, , nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2017թվականի N 30-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912–Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով Նշան Մայիսի Միհրանյանի, իրեն սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական 2288354) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի 7-րդ փողոցի թիվ 16 հասցեի, 07-051-005-011 կադաստրային ծածկագրով հողամասում 2013 թվականին ինքնակամ կառուցված 144.59ք.մ, մակերեսով շինությունները օրինականացնելու մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով , չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,որոշում եմ

1. Նշան Մայիսի Միհրանյանի կողմից, իրեն սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական 2288354) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի 7-րդ փողոցի թիվ 16 հասցեի, 07-051-005-011 կադաստրային ծածկագրով հողամասում 2013 թվականին ինքնակամ կառուցված 144.59ք.մ, մակերեսով շինությունները համարել օրինական:

2. Հաշվի առնելով, որ S=88.67 ք.մ. մակերեսով բնակելի տունը, S=43.95 ք.մ. մակերեսով շինությունները և S=11,97 ք.մ մակերեսով պարիսպն ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո ապա նրանց օրինականացման համար համայնքի բյուջե վճարել բնակելի տան համար՝ 97 537դրամ , շինությունների համար ՝ 29 007դրամ և պարիսպի համար՝ 7900դրամ, ընդամենը՝ 134 444 (հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր քառասուն չորս) դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նշված գումարը համայնքի բյուջե վճարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2017 թ.հունիսի 7
գ.Նուռնուս